

Կազմված է «20» 03 2017թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է


ԳՐԱՆՑՎԱԾ Է

«Բարեգործ վագորդների հայկական թիմ»  
բարեգործական հասարակական  
կազմակերպության հիմնադիր ժողովի  
որոշմամբ

ՀՀ Արդարադատության նախարարության  
աշխատակազմի իրավաբանական անձանց  
պետական ռեգիստրի գործակալության  
կողմից

«23» 03 2017թ.

«08» 04 2017թ.

Տնօրեն՝  Հայկ Դավեյան

Գրանցման N 211.189.953343  
Հարկ վճարողի հաշվառման համար  
02659818

Պետական ռեգիստրի գործակալություն

*ՅԱՆՈՆ ԱՆՂՆԱՐԻՑՈՒԹՅՈՒՆ* *Զափարյան*



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԲԱՐԵԳՈՐԾ ՎԱԶՈՐԴՆԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԹԻՄ» ԲԱՐԵԳՈՐԾՆ ԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2017 թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Բարեգործ վագորդների հայկական թիմ» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) անձանց շահերի ընդհանրության հիման վրա, ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված կամավոր հասարակական միավորում է:

1.2 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, անդամության կամավորությունը, խտրականության բացառումը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.4 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5 Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Բարեգործ վագորդների հայկական թիմ» բարեգործական հասարակական կազմակերպություն:

1.6 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան 0025, Չարենցի փողոց, 2\_րդ նրբանցք, 9 տուն:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ (ԱՌԱՐԿԱՆ) ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեության առարկան վազքային բարեգործության, որպես մշակույթի զարգացումն է, ինչպես նաև այդ բնագավառում միջազգային համագործակցության խթանումը ի շահ Հայաստանի Հանրապետության:

2.2 Կազմակերպության գործունեության նպատակներն ու խնդիրներն են՝ օրենքով սահմանված կարգով՝

ա) ՀՀ և ԱՀ տարածքում վազքային ակումբների հիմնում և զարգացում,

բ) ՀՀ և ԱՀ տարածքում վազքային միջոցառումների կազմակերպում,

գ) ՀՀ, ԱՀ և այլ երկրներում վազքային բարեգործական արշավների իրականացում,

դ) ՀՀ-ում և Արցախում բարեգործական նպատակներով դրամաշնորհների տրամադրում,

ե) բարեգործության ոլորտում միջազգային համագործակցության խթանում,

զ) համագործակցություն այլ երկրների վազքային բարեգործական կազմակերպությունների հետ:

2.3 Իր նպատակները իրականացնելիս Կազմակերպությունը՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպում է՝

ա) կոնֆերանսներ, կլոր սեղաններ, սեմինարներ պարապմունքներ՝ ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս,

բ) վազքային բարեգործական միջոցառումներ,

գ) բարեգործական նպատակ հետապնդող նախագծերին աջակցության տրամադրում,

դ) վազքի և վազքային բարեգործության վերաբերյալ գրականության մշակում և տպագրություն կամ աջակցություն վերջինիս,

ե) անհատներին և կազմակերպություններին վազքային բարեգործական արշավների կազմակերպման հարցում օժանդակության ցուցաբերում,

զ) վազքային բարեգործության բնագավառում հետազոտությունների կազմակերպում և իրականացում,

է) լուսաբանող միջոցառումների կազմակերպում և աջակցություն վերջինիս:

2.4 Կազմակերպությունն իրականացնում է նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

### **3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ**

3.1 Կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, ով ցանկանում է մասնակցել դրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

3.2 Անձը, ով կազմակերպության հիմնադիր չէ, կազմակերպության անդամ կարող է դառնալ իր կամքի ազատ արտահայտման հիման վրա՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

3.3 Կազմակերպությանը անդամագրվելու ցանկություն ունեցող անձը, օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով դիմումը ներկայացնում է կազմակերպության տնօրենին:

3.4 Կազմակերպության տնօրենը պարտավոր է նշված դիմումը ստանալուց հետո այն ներկայացնել գործադիր մարմնի հաստատմանը՝ հարցը ներառելով առաջիկա նիստի օրակարգում:

3.5 Կազմակերպության անդամագրման հարցը լուծում է գործադիր մարմինը:

3.6 Կազմակերպության անդամագրված անձն ազատ է Կազմակերպությունից դուրս գալու հարցում: Կազմակերպության անդամությունից զրկման որոշումը կայացնում է գործադիր մարմինը:

3.7 Կազմակերպության այն անդամը, ով (ժողովի կողմից սահմանված լինելու դեպքում) վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, կամ պարբերաբար խախտում է սույն կանոնադրությամբ նախատեսված դրույթներ կարող է զրկվել անդամությունից: Վերստին անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

#### **4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում, ընդ որում, ղեկավար մարմիններում, եթե լրացել է նրա 18 տարին,

բ) Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ,

գ) սպառիչ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին,

դ) ազատ դուրս գալ Կազմակերպությունից,

ե) Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ իր օրինական շահերի պաշտպանության նպատակով,

զ) մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպվող միջոցառումներին,

է) Կազմակերպության տնօրենի և Ժողովի ոչ կանոնադրական գործունեության դեմ բողոքարկել Ժողովին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

4.2 Կազմակերպության մարմնի, այդ թվում՝ Ժողովի որոշումը, որն ընդունվել է օրենքի, կազմակերպության սույն կանոնադրության կամ վերադաս մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ կամ ոտնահարել է կազմակերպության կամ կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

4.3 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա) հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման ու դրա պահպանման մասին,

բ) կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,

գ) մուծել մուտքի վճար և ամսական անդամավճար՝ Ժողովի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Ժողովը,

դ) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականություններն ու իրեն տրված հանձնարարությունը:

4.4 Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները թերացող անդամի նկատմամբ Կազմակերպության Ժողովի կամ գործադիր մարմնի որոշմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ Կազմակերպության անդամությունից զրկում:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2 Կազմակերպությունը կարող է ունենալ առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումներով կլոր կնիք, կարող է ունենալ դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով,

իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:

Կազմակերպությունն ունի խորհրդանիշ, որն իրենից ներկայացնում է սպորտային կոշիկի ներբան, որի վրա պատկերված են ճարտարապետական կոթողներ:

5.3 Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.4 Կազմակերպությունն իր կանոնադրությամբ սահմանված նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,

բ) հիմնադրել լրատվության միջոցներ,

գ) կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ,

դ) ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

5.5 Կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

5.6 Վարելու ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրավերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում:

5.7 Օգտագործելու իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքները, ստացված շահույթը միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ:

5.8 Օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ և շարժական և օրենքով չարգելված այլ գույք:

5.9 Օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման տրամադրել Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք:

5.10 Կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ:

5.11 Ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով:

5.12 Իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Կազմակերպությունը պարտավոր է՝

- ա) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,
- բ) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում,
- գ) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,
- դ) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
- ե) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,
- զ) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,

է) առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին, սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար,

ը) վարել իր անդամների հաշվառումը:

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ժողովին:

7.2 Ժողովը հրավիրվում է հինգ տարին մեկ անգամ՝ մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է նրանում որպես հեղինակ նշված անձից: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա գործադիր մարմնի կողմից սահմանված կարգով ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

ա) Ժողովն իրավագոր է, եթե գումարվել է եթե դրան մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին:

բ) Ժողովի օրակարգի, նրա աշխատանքի ժամանակի և վայրի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն էլեկտրոնային նամակով՝ ժողովից առնվազն 7 օր առաջ՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:

գ) Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է գործադիր մարմնի նախաձեռնությամբ կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա ընթացքում:

դ) Հերթական կամ արտահերթ Ժողով գումարվում է դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:



### 7.3 Ժողովն իրավասու է՝

- ա) կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը,
- բ) ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին,
- գ) որոշումներ ընդունելու Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին,
- դ) հաստատելու Կազմակերպության կառուցվածքը,
- ե) ընտրելու Կազմակերպության գործադիր մարմին,
- զ) որոշումներ ընդունելու Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին,
- է) կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանելու վարձատրության կարգը և պայմանները,
- ը) ընտրելու Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին),
- թ) առնվազն հինգ տարին մեկ հաստատելու գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,
- ժ) դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,
- ժա) ընդունելու որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին,
- ժբ) ընդունելու որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի,
- ժգ) իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ,

7.4 Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների կեսից ավելին: Հարցերի

քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.5 Եթե Ժողովում քննարկվում է Ժողովի որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Ժողովի տվյալ մասնակիցը քվեարկությանը չի մասնակցում:

7.6 Ժողովի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ Կազմակերպության կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Կազմակերպության կամ նրա մասնակցի (անդամի) իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության կամ մասնակցի (անդամի) դիմումի հիման վրա: Դիմումը կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

7.7 Գործադիր մարմինը ընտրվում է Ժողովի կողմից չորս տարի ժամկետով:

Գործադիր մարմինը իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության տնօրենի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Գործադիր մարմնի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Գործադիր մարմնի երկու անդամների պահանջով:

7.8 Գործադիր մարմինը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

ա) ապահովում է Ժողովի կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը,

բ) քննարկում և հաստատում է Կազմակերպության տնօրենի հաշվետվությունները, այդ թվում Ժողովին ներկայացվող հաշվետվությունը,

գ) առաջարկություններ է ներկայացնում Ժողովին նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,

դ) կանոնադրությամբ սահմանված կարգով և չափով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

ե) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

զ) տալիս է լիազորագրեր,

է) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

ժ) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

ժա) իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ,

ժբ) ընդունում, ազատում կամ անդամագրկում է Կազմակերպության անդամներին անդամությունից՝ ձայների մեծամասնությամբ,

ժգ) Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ կամ տույժեր,

ժդ) ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում,

ժե) ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ երկու միլիոն դրամը գերազանցող արժողությամբ ցանկացած տեսակի գույքը,

ժզ) հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության չափերն ու կարգը,

ժէ) սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց վարձատրության չափերն ու կարգը,

ժը) իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

7.7 Գործադիր մարմինը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների երկու երրորդից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասարության դեպքում տնօրենի ձայնը վճռորոշ է:

7.8 Կազմակերպության տնօրենն ընտրվում է գործադիր մարմնի կողմից գործադիր մարմնի անդամների կազմից 2 տարի ժամկետով:

Կազմակերպության տնօրենը հաստիքային աշխատող չէ:

7.9 Կազմակերպության տնօրենը՝

- ա) ղեկավարում է գործադիր մարմնի աշխատանքները և վարում է նրա նիստերը,
- բ) ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի,
- գ) արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր,
- դ) օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ,
- ե) Գործադիր մարմնի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի հաստիքացուցակը,
- զ) ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մինչև երկու միլիոն դրամ արժողության ցանկացած տեսակի գույք:

7.10 Կազմակերպության տնօրենը որոշումներն ընդունում է միանձնյա:

## **8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

8.1 Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

8.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

8.3. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

ա) Կազմակերպության անդամների ներդրումները,

բ) Կազմակերպության անդամների վճարումները (անդամավճարները),

գ) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

դ) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները,

ե) դրամական մուտքերը պետական բյուջեից,

զ) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,

է) հանգանակությունները,

ը) օրենքով չարգելված այլ միջոցներ:

8.4 Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

8.5 Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

8.6 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

**9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ,  
ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

9.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ:

Այդ դեպքում ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով սահմանված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

9.2 Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ՝ փոխանցում է պետական բյուջե:

9.3 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: